Արձանագրություն թիվ 1

ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի նիստի

2022 թ. սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 15-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ֆակուլտետի **2022-2023** ուսումնական տարվա պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. **2022-2023** ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի խորագրերի մասին (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
3. **2022-2023** ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի տարեկան պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի 2022-2023 ուսումնական տարվա պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ այս ուսումնական տարվանից խստորեն վերահսկվելու է պրակտիկայի ընթացքի վերահսկողության մեխանիզմը. ամեն շաբաթ ֆակուլտետում հանդիպում է կազմակերպվելու պրակտիկա անցնող ուսանողների հետ՝ հաշվետվողականության նպատակով: Հստակեցվել են պրակտիկայի անցկացման վայրերը և ամբիոնների հաստատմամբ ներկայացվել Խորհրդին՝ հաստատման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Ռ.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ., Ա.Վիրաբյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Բ.Գևորգյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Ա.Գևորգյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ֆակուլտետի 2022-2023 ուստարվա պրակտիայի անցկացման փաթեթը: Հանձնարարել ամբիոնների վարիչներին երկու շաբաթը մեկ անգամ դեկանին ներկայացնել հաշվետվություն՝ պրակտիկայի ընթացքի վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի խորագրերի մասին հարցը: Ամբիոնների վարիչները ներկայացրեցին իրենց բաժինների ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը: Ընթացքում եղան քննարկումներ, վերնագրերի ճշգրտումներ: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ մինչև ուսումնական տարվա ավարտը թույլատրելի են

վերնագրային որոշ ճշգրտումներ՝ առանց խաթարելու թեմայի բովանդակությունը: Առաջարկվեց հաստատել մագիստրոսական թեզերի վերնագրերի նախնական տարբերակները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Ռ.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ., Ա.Վիրաբյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Գևորգյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչի պաշտ., դոցենտ Լ.Գալստյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Ա.Գևորգյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի խորագրերը:

ԼՍԵՑԻՆ - **2022-2023** ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի տարեկան պլան-ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին հարցը (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան): Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ տարեկան պլանի ամսական օրակարգերը ներկայացվում են՝ ըստ ուսումնական պրոցեսի ստանդարտների, իսկ ընթացքում ենթարկվում են մասնակի ճշգրտումների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ., Ա.Վիրաբյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Գևորգյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Ա.Գևորգյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել **2022-2023** ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի տարեկան պլան-ժամանակացույցը:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան
Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 2

ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի նիստի

2022 թ. հոկտեմբերի 13-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 15-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ֆակուլտետի **2022-2023** ուսումնական տարվա հեռակա կրթական համակարգի լուծարքային շրջանի կազմակերպման մասին (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):

2. Համալսարանի 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ ամբիոնների կողմից շնորհակալագրերի և պատվոգրերի ներկայացված դասախոսների անվանացուցակի քննարկում և հաստատում (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի **2022-2023** ուսումնական տարվա հեռակա կրթական համակարգի լուծարքային շրջանի կազմակերպման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ հեռակա կրթական համակարգի լուծարքային շրջանն ընդգրկում է երկու փուլ՝ հոկտեմբերի 3-28-ը. արդեն կազմվել է ժամանակացույցը, քննող դասախոսները, ընթերականերն ու ուսանողները վաղօրոք իրազեկված են: Նշվեց, որ առարկայական պարտքերի մեծ մասը բաժին է ընկնում «Պարարվեստ» բաժնին: Հեռակա կրթական մասնագիտություններ սպասարկող ամբիոնների վարիչներին հրահանգվեց հետևողական լինել ուսամնա վարձերի հավաքագրման իրազեկումն ապահովելու հարցում. հեռակա կրթական համակարգում ֆակուլտետն ունի 8 մլն վարձավճարների պարտք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ Ա.Վիրաբյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – Համալսարանի 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ ամբիոնների կողմից շնորհակալագրերի և պատվոգրերի ներկայացված դասախոսների անվանացուցակի քննարկման և հաստատման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ մասնագիտական ամբիոններին վաղօրոք ներկայացվել էին խրախուսման չափանիշները՝ երկարամյա բարեխիղճ աշխատանքային ստաժ, ոլորտում մասնագիտական մեծ ներդրում, ճանաչվածություն, մարդկային և մանկավարժական լավագույն որակներ: Ամբիոններում քննարկվել էին առաջադրված թեկնածուների անունները և ներկայացվել ֆակուլտետի խորհրդի հաստատմանը: Ըստ այդմ, Լրագրության ամբիոնից՝ 10, Պարարվեստից՝ 15, Երաժշտությունից՝ 10, Թանգարանագիտություն, գրադարանագիտություն և մատենագիտությունից՝ 5, Ռեժիսուրայից՝ 8, Օպերատորություն, գեղարվեստական լուսանկարչությունից՝ 10 դասախոս:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն և հաստատել առաջադրված թեկնածությունները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Կուլտուրայի ֆակուլտետի Կառավարում (ըստ ոլորտի) մասնագիտության բակալավրատի հեռակա ուսուցման 4-րդ կուրսի ուսանող Ջոն Վախթանգի Մելիքյանի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պրակտիկան կազմակերպելու մասին հարցը /կրկնակի/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան Գ.Թադևոսյանը նշեց, որ ուսումնասիրելով Ջոն Վախթանգի Մելիքյանի՝ պրակտիկայի բաժին ներկայացված դիմումը՝ պարզել ենք, որ վերջինս անձնական խնդիրների պատճառով չի կարողացել մասնակցել պրակտիկային: Ուսանողը խնդրում է կազմակերպել իր բաց թողած ուսումնական պրակտիկան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով վերոնշյալը և ուսանողի կողմից ներկայացված դիմումը՝ թույլատրել Ջոն Վախթանգի Մելիքյանին 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի/**կրկնակի**/ ուսումնական պրակտիկան կազմակերպել ս/թ հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 16-ը /4 շաբաթ/ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

ԼՍԵՑԻՆ – Կուլտուրայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանի հաղորդումը ֆակուլտետի Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Գևորգյանի՝ Ս.Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» գրքի հայերեն թարգմանության II հատորի (խմբագրությունը՝ Կ.Գևորգյանի) և Ժան Ժորժ Նովերի «Նամակներ պարի մասին» (թարգմանությունը՝ ռուսերենից) գրքի հրատարակման երաշխավորելու մասին հարցը (հիմք՝ ամբիոնի 10.10.2022 թ. թիվ 2 արձ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ Ա.Վիրաբյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Համալսարանի գիտխորհրդին՝ հրատարակման երաշխավորելու Ս.Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» և Ժան Ժորժ Նովերի «Նամակներ պարի մասին» գրքերը:

ԼՍԵՑԻՆ – Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանի հաղորդումը ամբիոնի պրոֆեսոր Գ.Ա.Սուքիասյանի «Գրադարանագիտություն և մատենագիտություն» գիրքը որպես ուսումնամեթոդական ձեռնարկ երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ա.Մուրադյանը, դոցենտ Զ.Տոնոյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հրատարակման երաշխավորել Գ.Ա.Սուքիասյանի «Գրադարանագիտություն և մատենագիտություն» գիրքը որպես ուսումնամեթոդական ձեռնարկ:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացված 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի դասալսումների պլան-ժամանակացույցի հաստատման մասին հարցը (հիմք՝ ամբիոնների հոկտեմբերյան նիստի արձ.): Շեշտադրվեց գործընթացի

կարևորությունը կրթական վերջնարդյունքների առումով: Հանձնարարվեց կիսամյակի վերջում ամփոփել արդյունքները և ներկայացնել Խորհրդին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

Նիստի նախագահ՝ Գ.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 3

ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի նիստի

2022 թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 15-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023 ուսատարվա հեռակա կրթական համակարգի 1-ին կուրսերի խորհրդատվական աշխատանքների կազմակերպման մասին (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա կրթական համակարգի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կազմակերպման և անցկացման մասին (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուսատարվա հեռակա կրթական համակարգի 1-ին կուրսերի խորհրդատվական աշխատանքների կազմակերպման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ ս/թ նոյեմբերի 14-18-ը 1-ին կուրսերը հրավիրվել են ֆակուլտետ, որտեղ նրանց տրամադրվել են իրենց կուրսի դասիչները Classroom կրթական հարթակում, բաժանվել են օտար լեզուների խմբերը (1 անգլերեն, 1 ռուսերեն), տեղեկացվել են, որ ուսման վարձերը պետք է մուծեն 1 կիսամյակի վարձավճարը մինչև ս/թ դեկտեմբերի 1-ը: Ուսանողները ծանոթացել են նաև ֆակուլտետի հարուստ պատմությանը, ավանդույթներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ Ա.Վիրաբյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա կրթական համակարգի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կազմակերպման և անցկացման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, խոսեց առկա համակարգի 4-րդ բակալավրիատի և 2-րդ մագիստրատուրայի պրակտիկաների անցկացման արդյունքների և 4-րդ և 5-րդ հեռակա բակալավրի գալիք պրակտիկաների անցկացման անելիքների մասին: Նշվեց, որ առկա համակարգի պրակտիկան ընդհանուր առմամբ ընթացել է հարթ: Նորից ճշտվեցին հեռակա համակարգի պրակտիկաների անցկացման վայրերը և ղեկավարները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ա.Մուրադյանը, դոցենտ Զ.Տոնոյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Խորհրդի անդամները տեղեկացվեցին, որ ս/թ դեկտեմբերի 16-ին ֆակուլտետի դահլիճում կայանալու է բուհի 100-ամյա տոնակատարության շրջանակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի պարգևատրման արարողությունը:

Նիստի նախագահ՝ Գ.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 4

ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի նիստի

2022 թ. դեկտեմբերի 26-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 15-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. **2022-2023** ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների կազմակերպական հարցեր (զեկուցող՝ Գ.Թաղևոսյան):
2. Ֆակուլտետի 2022 թ. տարեկան հաշվետվության հաստատում (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաշվետվությունը ՄԿԾ-ների վերաբերյալ (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների կազմակերպական հարցերի մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքները կատարվել են բավարար մակարդակով. կազմվել են ձմեռային քննաշրջանի, խորհրդատվությունների և պարտքերի մարման, նաև 1-ին կիսամյակի պրակտիկայի պաշտպանության ժամանակացույցները և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և կառավարման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի 2022 թ. տարեկան հաշվետվության հաստատման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ 2022 թ. տարեկան հաշվետվությունների մասին

հարցը նախապես քննարկման է դրվել ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում և հաստատումից հետո ներկայացվել դեկանատ, որոնց հիման վրա էլ կազմվել է ֆակուլտետի ամբողջական տարեկան հաշվետվությունը: Առաջարկվեց հաստատել տարեկան հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ֆակուլտետի 2022 թ. տարեկան հաշվետվությունը:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաշվետվությունը ՄԿԾ-ների վերաբերյալ: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի ՄԿԾ-ներում դեռևս առկա են թերացումներ, որոնք պետք է վերացվեն: Ամբիոնների վարիչները ներկայացրին 2-րդ կիսամյակի ՄԿԾ-ների և SWOT վերլուծության կատարողականները: Փաստվեց, որ դրանք գրեթե ամբողջությամբ պատրաստ են և թեթևակի շտկումներից հետո կարող են տեղադրվել Classroom հարթակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և կառավարման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտոնակատար Լևոն Գալստյանի հաղորդումը նույն ամբիոնի դասախոս, հոգեբ.գ.թ. Դիանա Հովիկի Մարկոսյանին ՀՊՄՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ առաջադրելու մասին (հիմք՝ Հեռուստառադիոլրագրության ամբիոնի 2022 թ. դեկտեմբերի 1-ի թիվ 4 արձ.):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ՀՊՄՀ-ի գիտխորհրդին՝ Հեռուստառադիոլրագրության ամբիոնի դասախոս, հոգեբ.գ.թ. Դիանա Հովիկի Մարկոսյանին ՀՊՄՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածու առաջադրելու համար:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 5

ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի նիստի

2023 թ. հունվարի 31-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 15-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. Հեռակա համակարգի ընթացակարգային հարցեր (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաշվետվությունը ՄԿԾ-ների կատարողականի վերաբերյալ (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
4. Ֆակուլտետի 2022-2025 թթ. ռազմավարական ծրագրի քննարկում (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ քննաշրջանի արդյունքները բավարար են: Քննաշրջանին մասնակցել է 496 ուսանող, դրական գնահատական է ստացել 352-ը (որից՝ 125 գերազանց, 103 լավ, 31 բավարար, 93 անբավարար և չներկայացած՝ վարձավճարը չմուծելու համար): Այնուհետև բանախոսը

ներկայացրեց այս տվյալների բացվածքը՝ ըստ մասնագիտությունների՝ խնդրելով ամբիոնի վարիչներին ներկայացնել իրենց կարծիքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - Հեռակա համակարգի ընթացակարգային հարցերը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի դասապրոցեսը և քննաշրջանը անցկացվել է՝ համաձայն ՀՊՄՀ գիտխորհրդի 2022 թ սեպտեմբերի 5-ի որոշման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաշվետվությունը ՄԿԾ-ների կատարողականի վերաբերյալ: Հաշվետվություններում հիմնական շեշտադրումն առնչվում էր մասնագրերի և առարկայական նկարագրերի կրթական ելքային արդյունքների համապատասխանության պահպանման խնդրին: Նշվեց, որ մասնագրերի ելքային արդյունքներում բավականին տեսանելի պետք է լինեն բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով ողջ ուսումնական շրջանի ինչպես մասնագիտական ու գործնական գիտելիքների, այնպես էլ ընդհանրական փոխանցելի կարողությունների վերջնարդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի 2022-2025 թթ. ռազմավարական պլանի քննարկման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ ծրագրի կազմման հիմնագլուխներն ու դրույթները համապատասխանեցվել են Համալսարանի ռազմավարական պլանին, որի արդյունքում ֆակուլտետի իրականացվելիք գործողությունների ծրագիրն ամփոփվել է 6 հիմնագլուխներում: Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ֆակուլտետի բոլոր 6 մասնագիտական ամբիոնների գործողությունները, շահակիցների կարողությունները և ռիսկերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն և հաստատել:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - Կուլտուրայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանի հաղորդումը Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Էդգարի Էլբակյանին ՀՊՄՀ-ի գիտխորհրդի անդամ առաջադրելու մասին (հիմք՝ Ռեժիսուրայի ամբիոնի 2023 թ. հունվարի 25-ի թիվ 5 արձ.):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ՀՊՄՀ-ի գիտխորհրդին՝ Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արմեն Էդգարի Էլբակյանին առաջադրելու ՀՊՄՀ-ի գիտխորհրդի անդամ:

ԼՍԵՑԻՆ -Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտոնակատար Լևոն Գալստյանի հաղորդումը նույն ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Հակոբ Դանիելի Ավետիքյանին ՀՊՄՀ-ի գիտխորհրդի անդամ առաջադրելու մասին (հիմք՝ Հեռուստառադիոլրագրության ամբիոնի 2023 թ. հունվարի 12-ի թիվ 5 արձ.):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ՀՊՄՀ-ի գիտխորհրդին՝ Հեռուստառադիոլրագրության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Հակոբ Դանիելի Ավետիքյանին առաջադրելու ՀՊՄՀ-ի գիտխորհրդի անդամ:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 6

ՀՊՄՀ-ի «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի նիստի

2023 թ. փետրվարի 28-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 16-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի լուծարքների 1-ին փուլի արդյունքների մասին (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. Հեռակա համակարգի 1-4-րդ կուրսերի 1-ին ընթացիկ ստուգումների և 5-րդ կուրսի քննաշրջանի ընթացակարգային հարցեր (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի լուծարքների 1-ին փուլի արդյունքների մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի լուծարքների 1-ին փուլին բակալավրիատից և մագիստրատուրայից մասնակցել են 151 ուսանող, որոնցից դրական նիշ են ստացել 112-ը, անբավարար՝ 23-ը, չեն ներկայացել՝ 26-ը: Նշվեց, որ լուծարային շրջանի 1-ին փուլի արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են՝ հաշվի առնելով համաճարակային ներկա բարդ իրավիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:
ԼՍԵՑԻՆ – Հեռակա համակարգի 1-4-րդ կուրսերի 1-ին ընթացիկ ստուգումների և 5-րդ կուրսի քննաշրջանի ընթացակարգային հարցերի մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ արդեն կազմվել է 2022-2023 ուսումնական տարվա հեռակա համակարգի 1-4-րդ կուրսերի 1-ին քննաշրջանի ժամանակացույցը, անցկացվել են խորհրդատվություններ: Փետրվարի վերջից մեկնարկում է 5-րդ կուրսի քննաշրջանը, որի անցկացման բոլոր նախապատրաստական աշխատանքները կազմակերպվել են՝ ժամանակացույց, ընթերականեր, հարցաշարեր և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Ս.Խաչատրյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ., պրոֆ. պաշտ. Ա.Վիրաբյանը և այլք:
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – 2023-2024 ուստարվա ընդունելության նպատակով ս/թ մարտ ամսին մարզային քարոզարշավին ֆակուլտետի մասնակցության մասին հարցը (զեկուցող՝ Գ.Թադևոսյան): Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ ամբիոնները ներկայացրել են քարոզարշավի մասնակիցների իրենց թեկնածությունները: Քարոզարշավն անցկացվելու է Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Ս.Խաչատրյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ., պրոֆ. պաշտ. Ա.Վիրաբյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 7

ՀՊՄՀ-ի «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի նիստի

2022 թ. մարտի 31-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 16-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունների ներկայացման և հաստատման մասին (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. Առկա բակալավրիատի և մագիստրատուրայի նախապաշտպանությունների ժամանակացույցի և ընթացակարգային հարցերի մասին (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունների ներկայացման և հաստատման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, կարևորեց ամփոփիչ ատեստավորման քննությունների պատշաճ անցկացման գործում մասնագիտական ամբիոնների դերը: Քննական հանձնաժողովները պետք է համալրված լինեն ոլորտի պրոֆեսիոնալ կադրերով, միաժամանակ՝ մարդկային բարձր որակներով: Ամբիոնների վարիչները առանձին ներկայացրին այս առնչությամբ իրենց կատարած աշխատանքները՝ քննական հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունները:

ԼՍԵՑԻՆ - Առկա բակալավրիատի և մագիստրատուրայի նախապաշտպանությունների ժամանակացույցի և ընթացակարգային հարցերի մասին: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ նախապաշտպանությունները նախատեսված են ս/թ ապրիլի 10-14-ը: Կարևորվեց նախապաշտպանությունների ժամանակ վերստին ճշտորոշելու ավարտական աշխատանքի կամ թեզի վերնագրի արդիականությունը և համապատասխանությունը նրա կառուցվածքին: Նշվեց նաև նախապաշտպանության ժամանակ դրական՝ ուսուցանող և անկաշկանդ մթնոլորտի առկայության անհրաժեշտության մասին, ինչը մեծապես կնպաստի վերստին պարզաբանելու աշխատանքում ներկայացված դրույթները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, Ա.Էլբակյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացված 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի դասալսումների պլան-ժամանակացույցի հաստատման մասին հարցը (հիմք՝ ամբիոնների փետրվարյան նիստի արձ.): Շեշտադրվեց գործընթացի կարևորությունը կրթական վերջնարդյունքների առումով: Հանձնարարվեց կիսամյակի վերջում ամփոփել արդյունքները և ներկայացնել Խորհրդին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լ.Գալստյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, Ա.Էլբակյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Գևորգյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 8

ՀՊՄՀ-ի «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի նիստի

2023 թ. ապրիլի 27-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 16-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1.2022-2023 ուսումնական տարվա հեռակա կրթական համակարգի քննաշրջանի արդյունքների ամփոփում (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2.Առկա բակալավրիատի 3-րդ կուրսերի և «Պարարվեստ» բաժնի հեռակա 3-րդ կուրսի պրակտիկաների պաշտպանությունների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա հեռակա կրթական համակարգի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ քննաշրջանն ընդհանուր առմամբ դրական կարելի է գնահատել. քննություններն անցել են նախապես հաստատված ժամանակացույցով, ընթերականերով, ուսանողների 19 %-ը ստացել են գերազանց, 6%-ը՝ անբավարար, մնացածը՝ լավ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզինկյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - Առկա բակալավրիատի 3-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանությունների արդյունքների ամփոփման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ առկա բակալավրիատի 3-րդ կուրսերի պրակտիկան ընթացել է հարթ՝ առանց խաթարումների: Առաջարկվեց այս տարի ևս նախորդ տարվա նման պրակտիկաների արդյունքների ամփոփումն անցկացնել ամառային քննաշրջանի ընթացքում՝ հունիսի 8-28-ը: «Պարարվեստ» բաժնի հեռակա 3-րդ կուրսի պրակտիկային 38 ուսանողներից մասնակցել է 36-ը, որից 6-ը ստացել են գերազանց, 30-ը՝ լավ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզինկյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան

Արձանագրություն թիվ 9

ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի նիստի

2023 թ. մայիսի 8-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ «Կուլտուրայի» ֆակուլտետի խորհրդի հերթական առցանց նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 16-ի մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. 2022-2023 ուսումնական տարվա առկա և հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ քննաշրջանի անցկացման բոլոր նախապատրաստական աշխատանքները գրեթե ավարտված են. կազմվել են ժամանակացույցները, հստակեցվել են քննող և ընթերակա դասախոսների անունները, ավարտական կուրսերի ուսանողների վարձավճարների վճարման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, «Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության» ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, «Ռեժիսուրայի» ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, «Երաժշտության» ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Գևորգյանը, նույն ամբիոնի դոցենտ Կ.Մարտիրոսյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուսումնական տարվա առկա և հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ առկա քննաշրջանը սկսվելու է ս/թ մայիսի 16 և ավարտվելու է մայիսի 30-ին, հեռական՝ հունիսի 5-13-ը: Քննաշրջանի նախապատրաստական բոլոր աշխատանքները, բացի համակարգչային լսարանի կահավորումից, ավարտված են: Մասնագիտական ամբիոնների վարիչներին հանձնարարվեց հետևողական լինել՝ պատշաճ կերպով ապահովելու քննաշրջանի սահուն ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Գևորգյանը, նույն ամբիոնի դոցենտ Կ.Մարտիրոսյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Գևորգյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի «Ռեժիսուրայի», «Երաժշտության», «Օպերատորության», «Գեղարվեստական լուսանկարչության», «Պարարվեստի» ամբիոնների վարիչների հաղորդումը 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների համար սահմանված ավարտական աշխատանքների գրախոսությունն ու ղեկավարի կարծիքը Classroom հարթակում չտեղադրելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարտիրոսյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտոնակատար Լ. Գալստյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ելնելով նշված ստեղծագործական մասնագիտությունների առանձնահատկություններից՝ դիմել բուհի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը՝ արտոնել վերջիններիս Classroom հարթակում

չտեղադրելու ավարտական աշխատանքների համար սահմանված գրախոսությունն ու ղեկավարի կարծիքը:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան

Արձանագրություն 10

2023 թ. հունիսի 1-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 17-ի մասնակցությամբ

Օրակարգ՝

1. 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման մասին ամբիոնների հաշվետվությունների ներկայացում և հաստատում (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. 2022-2023 ուսումնական տարվա՝ ամբիոնների կողմից իրականացված դասալսումների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաշվետվությունը ՄԿԾ-ների կատարողականի վերաբերյալ (զեկուցող՝ Ա.Մարտիրոսյան):
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման մասին ամբիոնների հաշվետվությունների ներկայացման և հաստատման մասին հարցը: Ֆակուլտետի 6 մասնագիտական ամբիոնների վարիչները հանգամանորեն ներկայացրին իրենց բաժիններում առկա և հեռակա կրթական համակարգով բակալավրի և առկա մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման ընթացքը և ամփոփեցին արդյունքները: Մասնավորապես նշվեց, որ քննությունների անցկացման ժամանակացույցի խախտումներ չեն գրանցվել: Քննասենյակի տեխնիկական հագեցվածությունը եղել է բավարար, հանձնաժողովների կազմը ժամանակին ներկայացել է քննության, բացակայություններ չեն գրանցվել: Քննություններն անցել են ջերմ և բարեհաճ մթնոլորտում, բողոքարկումներ չեն գրանցվել: Քննությունների արդյունքում ֆակուլտետի 9 մասնագիտացումների միջին որակական գնահատականը 100-բալանոց համակարգում գնահատվում է 83:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի դեկան, մանկ.գ.թ., պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկ.գ.թ., պրոֆեսոր Կ.Գևորգյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Գևորգյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման մասին ամբիոնների հաշվետվությունները՝ գնահատելով բավարար:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա՝ ամբիոնների կողմից իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ ամբիոնների կողմից ներկայացված դասալսումների պլան-ժամանակացույցը Խորհրդի կողմից հաստատվել է 2022 թ. հոկտեմբերի և 2023 թ. մարտի նիստերով 1-ին և 2-րդ կիսամյակների համար: Նշվեց, որ դասալսումները մի յուրահատուկ մշտադիտարկում են ամբիոնի ուսումնական գործընթացը հավուր պատշաճի վերահսկելու համար: Կարևորվեց դասալսումների վերլուծական կողմը, քննարկումները և ամբիոնի վարիչի դերը այս գործընթացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի դեկան, մանկ.գ.թ., պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկ.գ.թ., պրոֆեսոր Կ.Գևորգյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Գևորգյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաշվետվությունը ՄԿԾ-ների կատարողականի վերաբերյալ մասին հարցը: Բանախոսը, մասնավորապես, նշեց, որ այս

հարցին Խորհուրդն անդրադարձել է 2023 թ. հունվարյան նիստում: Վերստին շեշտադրվեց մասնագրերում և առարկայական նկարագրերում կրթական ելքային արդյունքների համապատասխանության պահպանման խնդիրը: Նշվեց, որ մասնագրերի ելքային արդյունքներում բավականին տեսանելի պետք է լինեն բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով ողջ ուսումնական շրջանի ինչպես մասնագիտական ու գործնական գիտելիքների, այնպես էլ ընդհանրական փոխանցելի կարողությունների վերջնարդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Թադևոսյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և մենեջմենթի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կ.Գևորգյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան

Արձանագրություն 11

2023 թ. հունիսի 15-ին՝ ժամը 14:30, տեղի ունեցավ Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ Խորհրդի 27 անդամներից 17-ի մասնակցությամբ:

Օրակարգ՝

1. 2022-2023 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման արդյունքների մասին հաշվետվությունների ներկայացում և հաստատում (զեկուցող՝ Գ.Թադևոսյան):
2. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման մասին ամբիոնների հաշվետվությունների ներկայացման և հաստատման մասին հարցը: Ֆակուլտետի 3 մասնագիտական ամբիոնների վարիչները հանգամանորեն ներկայացրին իրենց բաժիններում հեռակա կրթական համակարգով բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման ընթացքը և ամփոփեցին արդյունքները: Մասնավորապես նշվեց, որ քննությունների անցկացման ժամանակացույցի խախտումներ չեն գրանցվել: Քննասենյակների տեխնիկական հագեցվածությունը եղել է բավարար, հանձնաժողովների կազմը ժամանակին ներկայացել է քննության, բացակայություններ չեն գրանցվել: Քննություններն անցել են ջերմ և բարեհաճ մթնոլորտում, բողոքարկումներ չեն գրանցվել: Քննություններին մասնակցել է 71 ուսանող, որից 15-ը՝ գերազանց, 42-ը՝ լավ, 14-ը՝ բավարար, 4 ուսանող արժանացել է գերազանցության դիպլոմի: Քննությունների արդյունքում ֆակուլտետի 6 մասնագիտացումների միջին որակական գնահատականը 100-բալանոց համակարգում գնահատվում է 79 (հիմք՝ ամբիոնների հունիսյան նիստերի արձ.):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ.Գալստյանը, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմ.գ.դ. Ա.Վիրաբյանը, Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկ.գ.թ., պրոֆեսոր Կ.Գևորգյանը, Ռեժիսուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Էլբակյանը, Երաժշտության ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Գևորգյանը, Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և ՍՄԳ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Երզնկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին ամբիոնների հաշվետվությունները՝ գնահատելով բավարար:

Նիստի նախագահ՝ Գ.Ս.Թադևոսյան

Նիստի քարտուղար՝ Ա.Ռ.Մարտիրոսյան